Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2024թ. հոկտեմբերի 11-ից 14-ը Ֆրանսիայի Հանրապետություն կատարած գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը՝

Գևորգ Պապոյան

2. Զբաղեցրած պաշտոնը՝

ՀՀ էկոնոմիկայի նախարար

3. Գործուղման վայրը և ժամկետները՝

Ֆրանսիա՝ ք. Դիժոն, 2024թ. հոկտեմբերի 11-ից 14-ը

4. Հրավիրող կողմը՝

Ֆրանսիայի Պարենի և գյուղատնտեսության նախարարություն

5. Գործուղման նպատակը՝

- Մասնակցություն Խաղողի և գինեգործության միջազգային կազմակերպության (OIV) հիմնադրման հարյուրամյակին նվիրված միջոցառմանը,
- Մասնակցություն Խաղողի և գինեգործության միջազգային կազմակերպության նոր գլխամասային գրասենյակի բացման պաշտոնական արարողությանը,
- Մասնակցություն Խաղողի և գինեգործության 45-րդ համաշխարհային համաժողովին:

6. Քննարկված թեմաները՝

Համագործակցության ամրապնդում միջազգային գործընկերների հետ՝ համաշխարհային գինեգործության կայուն զարգացման ուղղությամբ

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

Ս.թ. հոկտեմբերի 11-ից 13-ը Ֆրանսիայի Հանրապետության Դիժոն քաղաքում ՀՀ էկոնոմիկայի նախարար Գևորգ Պապոյանը և նախարարի տեղակալ Արման Խոջոյանը մասնակցեցին Խաղողի և գինեգործության միջազգային կազմակերպության (OIV) հիմնադրման հարյուրամյակին նվիրված միջոցառմանը, կազմակերպության նոր գլխամասային գրասենյակի տեղափոխման պաշտոնական արարողությանը, ինչպես նաև Խաղողի և գինեգործության 45-րդ համաշխարհային համաժողովին: Կազմակերպությանն անդամակցում է աշխարհի շուրջ 50 երկիր և հոբելյանական միջոցառմանը մասնակցում էին կազմակերպության անդամ շուրջ 33 երկրների նախարարական պատվիրակություններ: Թե՛ միջոցառման և թե՛ համաժողովի շրջանակներում հայկական պատվիրակությունը տարբեր ձևաչափի հանդիպում-քննարկումներ ունեցավ մասնակից երկրների պատվիրակությունների հետ՝ ուղղված համաշխարհային գինեգործության կայուն զարգացման համատեքստում համագործակցության ամրապնդմանն ու ընդլայնմանը:

Միջոցառման շրջանակում կազմակերպված գյուղատնտեսական նախարարական քննարկմանը ՀՀ էկոնոմիկայի նախարար Գևորգ Պապոյանը հանդես եկավ ելույթով՝ իր խոսքում նշելով Հայաստանի գինեգործության զարգացման միտումների մասին, կարևորեց Խաղողի և գինեգործության միջազգային կազմակերպության (OIV) դերը համաշխարհային գինեգործության և խաղողագործության զարգացման համընդհանուր տեսլականում, ինչպես նաև ընդգծեց միջազգային համագործակցության կարևորությունը անդամ երկրների զարգացման համատեքստում: Պատրաստակամություն հայտնեց 47-րդ համաշխարհային համաժողովը հյուրընկալել Հայաստանում:

Ֆրանսիայի Պարենի և գյուղատնտեսության նորանշանակ նախարար Աննի Ժենեվարի հետ քննարկվեցին երկկողմ հարաբերությունների ոլորտային շրջանակները՝ հիմնական շեշտադրումը կենտրոնացնելով հայ-ֆրանսիական տնտեսական համագործակցության 2021-2026թթ. ճանապարհային քարտեզով ամրագրված դրույթների իրականացման և երկուստեք աջակցության ուղղությամբ՝ վերջինիս ամբողջական իրականացման և ընդլայնման նպատակով:

Վրաստանի Շրջակա միջավայրի պահպանության և գյուղատնտեսության նախարար Օթար Շամուգիայի հետ հանդիպման ընթացքում կողմերը անդրադարձան 2024 թվականի հունվարին ստորագրված՝ գյուղատնտեսության ոլորտում համագործակցության հուշագրում ամրագրված դրույթների իրականացմանը: Օթար Շամուգիան հայտնեց, որ իրականացման առավել գործուն քայլեր հնարավոր կլինի ձեռնարկել Վրաստանում նախատեսվող առաջիկա ընտրությունների ավարտից հետո, իսկ մինչ այդ՝ Վրաստանի գինեգործության գործակալությունը պատրաստակամ է հյուրընկալել Հայաստանի խաղողագործության և գինեգործության հիմնադրամի ներկայացուցիչներին և կիսվել խաղողի ռեեստրի ստեղծման հաջողված փորձով՝ ընդլայնելով համագործակցությունն այդ ասպարեզում:

ՀՀ էկոնոմիկայի նախարարի գլխավորած պատվիրակությունը երկկողմ հանդիպումներ ունեցավ նաև Մոնտենեգրոյի, Հնդկաստանի, Կիպրոսի, Լյուքսեմբուրգի և Բուլղարիայի նախարարների հետ: Քննարկվեցին գյուղատնտեսության և մասնավորապես գինեգործության զարգացմանն ուղղված երկկողմ հետաքրքրություն ներկայացնող հարցերի լայն շրջանակ:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

- Այցի ընթացքում պայմանավորվածություններ են ձեռք բերվել շարունակել քննարկումները տնտեսական համագործակցության ընդլայնմանն ուղղված աշխատանքներ և ծրագրեր իրականացնելու վերաբերյալ:
- Ձեռք է բերվել պայմանավորվածություն, որ Ալբանիայի գյուղատնտեսության նախարար տիկին Անիլա Դենաժին և Մոնտենեգրոյի գյուղատնտեսության նախարար պարոն Վլադիմիր Ժոկովիչին կայցելեն Հայաստան՝ երկկողմ համագործակցության ակտիվացման նպատակով:
- Հայաստանը հայտ կներկայացնի Խաղողի և գինեգործության միջազգային կազմակերպությանը (OIV) առաջիկա 47-րդ համաշխարհային համաժողովը հյուրընկալել Հայաստանում:

9. Ստորագրությունը, ամսաթիվը՝ 16.10.2024թ.

Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2023 թվականի մարտի 23-ի
N 326-Ն որոշման

Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թվականի
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշման

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը՝ **ՀՀ էկոնոմիկայի նախարարություն**

2.Գործուղման մասին իրավական ակտի համարը՝ ՀՀ վարչապետի N 903-Ա որոշում առ 07.10.2024թ.

3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)՝

Գևորգ Պապոյան - Էկոնոմիկայի նախարար

(թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում)

4. Գործուղման ժամկետները՝ **2024 թվականի հոկտեմբերի 11-14-ը**

5. Գործուղման վայրը՝ Ֆրանսիայի Հանրապետություն **(Դիժոն)**

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության 2024 թվականի պետական բյուջեով արտասահմանյան պաշտոնական գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին:

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)
_2 օրվա գիշերավարձ_____
2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան)
(ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը)

[■] **ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը**

[ ] բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Գևորգ Պապոյան	Ընդամենը (դրամ)
Ճանապարհածախս	Ավիաճառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)	էկոնոմ դաս	
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	**259,708**	**259,708**
Գիշերավարձ	Վճարը 1 գիշերվա համար (Դիժոն, EUR) 164	164.0	
	Վճարը 1 գիշերվա համար (դրամ)	69,167.0	
	Գիշերների քանակը	1	
	Ընդամենը (դրամ)	**69,167**	**69,167**
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (Դիժոն, EUR)	114	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	48,367	
	Օրերի քանակը	4	
	Ընդամենը (դրամ)	**193,467**	**193,467**
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար		
	Մուտքի արտոնագրի վճար	-	-
	Այլ ծախսեր (նկարագրել)		
Ընդամենը ծախսեր (դրամ)		**522,342**	**522,342**

*07.10.2024թ. ՀՀ ԿԲ արտարժույթի միջին փոխարժեք՝ 1 EUR 424.27

*16.10.2024թ. ՀՀ ԿԲ արտարժույթի միջին փոխարժեք՝ 1 EUR 421.75

Գլխավոր քարտուղար
/Գլխավոր ֆինանսիստ/՝ ՀԱՅԿԱԶ ՆԱՍԻԲՅԱՆ